պատկանող գյուղերը անձամբ շահի կողմից կարող էին վաճառվել մասնավոր անձանց։ Այդպիսի անձնավորություն է եղել, օրինակ, հիշյալ Մուրադ բեկը, որ, ինչպես նշված է կալվածագրում, Մեղրի գյուղը ժամանակին գնած է եղել Շահ-Թահմազից։ Սակայն, ինչպես տեսնում ենք, XVII դարում նորից Մեղրին հիշվում է խասս գյուղերի շարքում։ Այդ փաստը գալիս է ապացուցելու հողատիրության և հատկապես համայնքային հողատիրության խիստ անկայուն և անապահով վիճակը։ Տեղին է այստեղ հիշել Վ. Մինորսկու խոսքերը. «Այն դեպքում, երբ հողի սեփականության հարցում վճռական դեր կարող է խաղալ իշխանավորների բարի կամ չար տրամադրությունը, ինչպե՞ս կարելի է սպասել, որ մարդկանց իրավունքները (այս դեպքում առավելապես համայնիկ, հողագործ գյուղացու իրավունքները— Հ. Փ.) ձևավորվեն և կայուն տեսք ստանան»[43]։

Ինչպես վերը նշեցինք, Երևանի բեկլարբեկիության ենթակա Թուման-և Նախջևանի Ազադ-Ջիրանի մահալում գտնվող խասս գյուղերի մասին արժեքավոր տեղեկություններ են տրված Զաքարիա Ագուլեցու «Օրագրության» մեջ։ Այստեղ գտնում ենք նույնքան արժեքավոր վկայություններ նաև այդ գյուղերից գանձվող հարկերի «զաբթ»-ով վարձակալվելու մասին։ Այսպես, պարզվում է, որ Ագուլիսը և Ազադ-Ջիրանում գտնվող ու թագավորական խասսին պատկանող մյուս չորս ավանները (Մեղրի, Շոռոթ, Լեհրամ, Աստապատ) երկար ժամանակ գտնվել են Ադերբայջանի վեզիր Միրզա Իբրահիմի զաբթում։ 1667 թ. մեկ տարով դրանք տրվել են Երևանի բեկլարբեկի Սաֆիկուլի խանին։ Մյուս տարի 1000 թումանով նորից տրվում են Միրզա Իբրահիմին և յոթ տարի հաջորդաբար մնում նրա ձեռքում։ 1675 թ. հինգ խասսերը զաբթով վերցնում է ագուլեցի Մուսաբեկի որդի Իսախան բեկը։ 1680 թ. Իսախան բեկը մեռնում է և խասսերը տրվում են ոմն Խոսրով աղայի[44]։ «Յետով Ըսպահանա խաբար եկավ,— գրում է Ագուլեցին,— թե Մուսաբեկի հերն որ էր Իսախան-բեկն, մեռավ։ Ջերայ խասերն այս Իսախան բեկս էր Իջարայ արել, այս ջանիբես խասսերն սոցանե կտրեցին»[45]։

Մեջ բերված հատվածից միանգամայն պարզ երևում է, որ «զաբթը» ոչ այլ ինչ էր, եթե ոչ միայն տարբեր օբյեկտներից ստացվող հարկերի վարձակալումը (իջարե) մասնավոր մարդկանց կողմից։ Նույն Իսախան բեկի մասին այլ առիթով Ագուլեցին գրում է. «1126 (1677)-ումն Աքուլիս էր աքուլեցի Մուսաբեկի տղայ Իսախան-բեկի զաֆտումն։ Ոչ թե միայն Աքուլիս, այլև ե (5) խասս գեղն, որ Մեղրի, Աքուլիս, Շոռոթ, Լեհրամ, Աստապատ, այս ե (5) գեղս շահն տվելայ Իսախան-բեկի զաֆտն»[46]։ Կասկած չի կարող լինել, որ «զաֆտն» ու «իջարան» Ագուլեցու մոտ օգտագործված են որպես համանիշ տերմիններ։ «Օրագրության» մեջ գործածված է նաև մեզ ծանոթ «զարիթ» տերմինը։ Այսպես, 1666 թվականի տակ կարդում ենք. «Թվին ՌՃԺԵ (1665) Ագուլաց զաբուդն էր Ադիլբեջանայ վեզիր Միրզա Իբրահիմն»[47]։

Ինչպես տեսնում ենք, շուրջ 16 տարվա ընթացքում (1664—1680) խասս գյուղերի վարձակալները փոփոխվել են հինգ անգամ։ Ըստ որում, որպես վար-

43 Tadhkirat al-Muluk, p. 195.

44 Տե՛ս Զաքարիա Ագուլեցի, 63, 68, 69, 70, 80, 94, 112, 119, 134, 150 էջերը։

45 Նույն տեղում, էջ 150։

46 Նույն տեղում, էջ 134։

47 Նույն տեղում, էջ 68։